**Նոտարական ակտի կոդ:** 723-20240917-67-8342901
**Նոտարական ակտի գաղտնագիր:** 4GEEZX

Թարգմանություն անգլերենից

# ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Ես՝ Ստիյն Կլոոտս-ս (ծնված՝ 14/07/1980 թ. Դենդերմոնտում, Բելգիա, բնակվող՝ Սինտ-Ուրսմարու փողոց 15, 9200 Դենդերմոնտ, Բելգիա, ID 592-1561400-72), լիազորում եմ Զալիբեկ Անտոնյանին (ծնված 27/10/1996 թ, Հայաստանի Հանրապետությունում, բնակվող՝ Հայաստան, Մայակովսկի, Դուրյան փողոց 34, անձնագրի համար՝ AV0660474), լինել իմ ներկայացուցիչը մարզպետարանում, մունիցիպալ վարչությունում, գյուղապետարանում, քաղաքապետարանում, քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում, թաղապետարանում, նոտարական գրասենյակում, ՀՀ Կադաստրի կոմիտեում, կազմակերպել և կատարել շինարարական աշխատանքներ լիցենզավորված գեոդեզիական ընկերություններում, ՀՀ արխիվներում, պետական և ոչ պետական այլ հիմնարկներում՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, գյուղ Մայակովսկի, 15-րդ փողոց, 9-րդ փակուղի թիվ 5/1-ի համար:
Ստանալ շինարարության թույլտվություն և վերջնական ակտ, ՀՀ, Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, գյուղ Մայակովսկի, 15-րդ փողոց, 9-րդ փակուղի թիվ 5/1 հասցեում գտնվող անշարժ գույքն ամբողջությամբ օրինականացնել (սեփականաշնորհել), կատարել պետական գրանցում, ստանալ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական:
Լինել իմ ներկայացուցիչը «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ում, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ում, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում՝ կապված ՀՀ, Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Մայակովսկի գյուղ, 15-րդ փող., 9-րդ փակուղի, թիվ 5/1 հասցեում գտնվող անշարժ գույքի հեռախոսի, ջրամատակարարմամբ, էլեկտրամատակարարմամբ և գազամատակարարմամբ, իմ անունից կնքել (կարգավորել) պայմանագրեր, կատարել բոլոր կոմունալ վճարումները, տալ դիմումներ, հանձնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկանքներ, ստորագրել իմ անունից, անել հայտարարություններ և կատարել սույն լիազորության հետ կապված բոլոր գործողությունները:

Լիազորագիրը տրված է 3 տարի ժամկետով՝ վերալիազորման իրավունքով:

Լիազորող՝ Ստիյն Կլոոտս (ստորագրված)

26/08/2024
**************************************************************************************************
Անգլերենից հայերեն թարգմանեց **Արմենուհի Ղալաչյանը** ________:
Թարգմանությունը կատարված է իմ կողմից, այն ճիշտ է և լրիվ:
**Երկու հազար քսանչորս թվականի սեպտեմբերի տասնյոթին,** ես, ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար **Լիանա Հովհաննիսյանս,** վավերացնում եմ տվյալ տեքստի *անգլերենից հայերեն* լեզվով թարգմանչուհի՝ **Արմենուհի Ղալաչյանի** ստորագրության իսկությունը: ՀՀ «Նոտարիատի մասին» օրենքի 68 հոդվածի համաձայն հաստատում եմ, որ փաստաթղթի թարգմանությունը կատարել է իմ կողմից վստահված թարգմանիչը, այլ ոչ թե դրանում շարադրված փաստերը:

Գրանցված է սեղանամատյանում ____13066____ ով
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

**Նոտար** ________